# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ԹԻՒԸ

Վիեննայի Մխիթարեան Հարք, որ 40 տարիներէ ի վեր կը հրատարակեն Հանդէս Ամսօրեայն, աշխատակցութեամբ հայ եւ եւրոպացի հայագէտներու, այս ուսումնական հրատարակութեան 40րդ տարին յիշատակելու համար 1927-ի Դեկտեմբերի թիւը հրատարակեցին բացառիկ ծաւալով մը, 370 էջ, որուն մեծագոյն մասը գրած են եւրոպացի հայագէտներ, գերմաներէն, ֆրանսերէն լեզուներով մասնաւորապէս:

Հանդէս Ամսօրեայ իր քառասնամեայ ծառայութեամբը Կեդրոնական Եւրոպայի մէջ եղած է հայգիտութեան համար առաջնորդող հրատարակութիւն մը, որուն մէջ ուսումնասիրուած են հայոց պատմութիւնը, հայ լեզուն, հայ մատենագրութիւնը, հայ հնագիտութիւնը, և ուրիշ հայացի նիւթեր այնքան ձեռնհասութեամբ:

Հանդէս Ամսօրեայ մասնագիտական հրատարակութիւն մըն է, եւ կ'արժէ որ ուղղակի մօտ գործէ ան Հայոց մտաւորական շրջանակներուն մէջ և նիւթապէս քաջալերուի իր մինչև ցարդ ըրած և այսուհետև իր ընելիք թանկագին ծառայութիւններու փոխարէն հայ ժողովուրդին հասկցող և ունեւոր զաւակներու կողմէն:

Այսպիսի մասնագիտական հրատարակութիւններ, որոնք առանց աղմուկի շատ մեծ ծառայութիւններ կը մատուցանեն ի նպաստ հայ դատին, կ'արժէ որ առարկայ ըլլան հայ ժողովուրդի գործնական գուրգուրանքին և համակրութեան: Եւ քառասնամեայ Յոբելեանը Հանդէս Ամսօրեային՝ շատ բարեդէպ առիթ մըն է մեր ժողովուրդին գործնականապէս յայտնելու համար իր համակրանքը:

# ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
# ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ

Մամուլի տակ է Օրմանեան Սրբազանի ինքնակենսագրութիւնը, ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔ տիտղոսին տակ:

Ութածալ 480 էջերէ պիտի բաղկանայ գործին բուն մասը, բաժնուած 100 հատուածներու:

Տպագրութեան ծախքը կը հոգայ Ս. Աթոռիս Ելեւմտից Տեսուչ, Գեր. Մատթէոս Եպս. Գայըգճեան, որ խորունկ յարգանք մը կը տածէ միշտ Օրմանեան Սրբազանի յիշատակին:

Այս գիրքին գինը պիտի որոշուի Տպագրութենէն ետքը, չափաւոր գին մը:

Անոնք որ կը փափաքին ապահովել օրինակ մը այս գիրքէն, հիմակուընէ պէտք է դիմեն Ս. Աթոռիս Տպարանին Տեսչութեան և արձանագրել տան իրենց անունները:

Direction de l'Imprimerie Arménienne du St. Jacques
JÉRUSALEM — Palestine

digitised by A.R.A.R.@

# ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

ՍԻՈՆի այս թիւն ալ զոյգ է, Օգոս.-Սեպտեմբեր, լման 64 երես։

Այս կարգադրութիւնը եղաւ, որպէսզի ՍԻՈՆ-ի խմբագրական մարմնի անդամները, այս ամառնի տօներուն, առիթ ունենան արձակուրդի շունչ մը առնելու։

ՍԻՈՆի Հոկտեմբեր թիւը լոյս կը տեսնէ նոյն ամսու մէջ։

## ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

33. **ՁԱՅՆ ՄԸ ԱՆՑԵԱԼԷՆ** (Կեանքի խաղեր), Գրեց ՏԱՃԱՏ (Փրոֆ. Նշան Ս. Պալեօզեան), Հրատարակութիւն *Հայ Գրական Հիմնարկութեան*, Նիւ Եորք 1927. 8° էջ 237+3, գին 75 սէնթ։

34. **ՆՈՐ ՇԷՆ** (*Վերածնած Խաչքար*) — (Վէպ Տոհմային կեանքէ) ՍԵՊՈՒՀ, հրատարակուած է *Հայ Գրական Հիմնարկութեան* կողմէն «ի յիշատակ Կարապետ Հաճուրս Գարակէօզեանի»․ 1927, Նիւ Եորք, 8° էջ 172, գին 1 տոլար։

35. **ՏԱՆ ՏԻԿԻՆԸ**, Տետրաշար *Հայ Գրական Հիմնարկութեան*, տպ. ԿՈՉՆԱԿ. 1928. 16° էջ 16։

36. **Հ. ՀԱԲԱՐՁՈՒՄԵԱՆ**, *Երկերի Ժողովածու*, Հատոր Երկրորդ, Բանաստեղծութիւններ. Տպ. Վիեննա, 1928, Մխիթարեան Տպրն. 8° էջ 312, գին 1,25 դոլար։

37. Գործնական եւ Գիտական Լուսանկարչութիւն. Հեղինակ՝ Հայկ Մ. Մոստիչեան. Հրտկ. Մոստիչեան Տպարանի. Լառնաքա, Կիպրոս. 8° էջ 152. Գին՝ 7 Շիլին։

38. **ՏԱՍԸ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ**, Թարգմ. Վ. Գէորգեան. Տպ. «Հրազդան» 1928, Պէյրութ, 8° էջ 94. գին 7 ֆրանք. — Հրատարակութիւն «Ջահակիր» Գրական Ընկերութեան, Թիւ 6։

Վ. Գէորգեան, Թրիփոլի (Քերթուած), Տպ. «Հրազդան», 1928, Պէյրութ, 8° էջ 30. Գին 4 ֆր. — Մատենաշար «Ջահակիր», Թիւ 7։

39. Հայ Կաթողիկէ Հասարակութեան Գ. Շրջան Կրօնական եւ Աշխարհական Գործոց բաժանում. — Համառօտ նկարագրութիւն մը։ Հրատարակուեցաւ Հայ-Կաթողիկէ Վարչական Ժողովոյ 28 Մայիս 1928ի որոշմամբ. Կ. Պոլիս, 1928, Տպ. Ք. Ճարեան. 8° էջ 96։

40. KÉVORK ASLAN, Études Historiques sur le Peuple Arménien, Nouvelle Édition Illustrée par les soins de Frédéric Macler, avec 16 Planches hors texte, Paris Lib. Orien. P. Geuthner, 1928. մեծ 8° էջ 340, Հրատարակուած Ն. Վ. Պօղոս Փաշա Նուպարի առատաձեռնութեամբ։

digitised by A.R.A.R.@

# ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Գահիրէի Պէրպէրեան Վարժարանին համար Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկ. Գուշակեանի նախաձեռնութեամբ և նախագահութեամբ կազմուած է Խնամակալութիւն մը, որուն անդամներն են Գ. Գ. Հրանդ Նասիպեան՝ ատենապետ, Արամ Տ. Մարգարեան՝ Բ. ատենապետ, Յովհ. Սէքսէնեան՝ ատենադպիր, Տիգրան Հաճընլեան՝ գանձապետ և Կ. Սէֆէրեան՝ խորհրդական։ Խնամակալութիւնը հիմնուած է նկատի ունենալով այն կարեւոր դերը զոր կատարել կոչուած է այս մեծ Վարժարանը գաղութահայութեան մէջ, հայ երկրորդական կրթութեամբ օժտուած նոր սերունդ մը պատրաստել, ինչ որ անհրաժեշտ է մեր գաղութահայ Ազգային պահպանման և զարգացման համար։ Խնամակալութիւնը ձեռնարկած է ընդհանուր գաղութահայութեան օգնութեամբ Պէրպէրեան Վարժարանը դնել նիւթական հաստատ հիմերու վրայ և զայն օժտել կրթական բոլոր արդիական միջոցներով։ Ընդարձակ Յայտագիր-Ծրագիրը ստանալու համար դիմել Տնօրէնութեան սա՛ հասցէով.

COLLÈGE BERBERIAN Haret el Daramalli, N° 1, Choubra
Le Caire (Egypte)

## «ՍԻՈՆ»Ի ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

12. **ՕՇԱԿԱՆ**, Դպրոցական Ամսաթերթ, կը հրատարակուի ամէն ամսոյ 15ին, յատուկ վարչական մարմնոյ մը կողմէ՝ որուն մաս կը կազմեն Պատ. Ա. Ֆ. Գոնախիւլեան, Տօքթ. Յովհ. Մանուկեան, Յարութիւն Արըճեան, Թագւոր Կէլիպօլեան եւ Տիկ. Վիքթորիա Մումճեան։ Տարեկան Բաժնեգին 20 Ֆրանք։ Հասցէ.

Rédaction «OCHAGAN» Ecole Arménienne, HASKOVO (Bulgarie)

13. **ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**, Ամսաթերթ Յունաստանի Հայ Մշակութային Ընդհանուր Միութեան։ Տարեկան բաժնեգին Չորս Շիլին. հասցէ

Revue Mensuelle «NOR SEROUNT» Poste Restante, Le Piré (Grèce)

**Ծանօթ.**— Ստացուած է միայն Բ. Տարի Թիւ 11-12, Ապրիլ 30 — 1928. **Նոր Սերունդ**ին ամբողջ հաւաքածուն ղրկեցէք, ՍԻՈՆի հաւաքածուին հետ փոխանակելու համար։

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Բոլոր անոնք որ ինքնաբերաբար յօդուածներ եւ քերթուածներ կը ղրկեն ՍԻՈՆի, անպատճառ հրատարակելու խնդրանքով, ՍԻՈՆի Խմբագրութիւնը պարտք կը համարի իրեն՝ յարգանօք դիտել տալ այնպիսիներուն որ եթէ ղրկուածները յարմար դատուին հրատարակուելու, անպատճառ կը հրատարակուին, ագան կամ անագան. հակառակ պարագային՝ մէկդի կը ձգուին, եւ ՍԻՈՆի Խմբագրութիւնը ոեւէ պարտք չ'զգար այս առթիւ գրուած նամակներուն պատասխանելու, բացատրութիւններ տալու կամ ղրկուած ձեռագիրները վերադարձնելու։ Ձեռագիրներ կը վերադարձուին իրենց տէրերուն՝ պայմանով որ անոնք հոգան փոստի ծախքը։

Խմբագրութիւն ՍԻՈՆի

digitised by A.R.A.R.@